**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԱԲՈՒ ԶԱԻԴ ԱԼԻ ՄՈՒՍԱ

ՆԵՐՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՍՐԱՅԵԼԱ-ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար սեղմագիր

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր **Դ. Ա. Հովհաննիսյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա.Պ. Փոլադյան** պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ս.Մ. Գրիգորյան**
Առաջատար կազմակերպություն՝	**Հայ-Ռուսական (Սլավոնական համալսարան)**

Պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի հունիսի 30-ին, ժամը՝ 12:00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի՝ Համաշխարհային պատմություն 006 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Բաղրամյան 24):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. մայիսի 12-ին:

Մասնագիտական խորհրդի պ.գ.թ., դոցենտ	գիտական քարտուղար՝ **Գ.Մարգարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի արդիականությունն առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ փորձ է արվում վերհանել պաղեստինյան հիմնախնդրի և դրա տարբեր ասպեկտների վերաբերյալ պաղեստինյան տեսակետը: Այդ նպատակով հարցազրույցներ են անցկացվել Իսրայելում և Արևմտյան ափին բնակվող պաղեստինցի քաղաքական գործիչների հետ՝ պաղեստինյան հասարակական կարծիքը հնարավորինս ամբողջական արտացոլելու համար, ինչն օգնել է հետազոտությանը և հարստացրել այն:

Հետազոտությունը կարող է միջազգային հասարակական կարծիքին ներկայացնել ներկա պաղեստինյան իրականության, ընթացիկ իրողությունների և խնդիրների վերաբերյալ պաղեստինյան տեսակետները: Արդիական է նաև ներպաղեստինյան տեսանկյունից անդրադարձը պաղեստինյան հիմնախնդրին, դրա առաջընթացներին և հետընթացներին, պաղեստինյան սոցիալ-քաղաքական և ժողովրդագրական իրողության մեջ տեղի ունեցող փոփոխությունների դինամիկային:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքի հիմնական խնդիրներն են՝

ա) Ուսումնասիրել պաղեստինյան հիմնախնդրի ու պաղեստինյան խմբավորումների, հատկապես «Համաս» և «Ֆաթհ» շարժումների առաջացման և զարգացման հանգամանքները, դրանց քաղաքական հետնաբեմը և այդ ամենի ազդեցությունը պաղեստինյան իրականության վրա 1988-ին Առաջին Ինթիֆադայից մինչև 2006թ. խորհրդարանական ընտրությունները:

բ) Ուսումնասիրել «Համաս» և «Ֆաթհ» շարժումների միջև առկա տարաձայնություններն ու առճակատումները, հաշտության հնարավորությունները և պաղեստինյան հակամարտության կարգավորման հնարավոր ուղիները:

գ) Ուսումնասիրել պաղեստինյան դաշտում ընթացող խաղաղության գործընթացը՝ մասնավորապես Օսլոյից հետո,

խաղաղության գործընթացի վերաբերյալ պաղեստինյան կողմերի դիրքորոշումները, դրանց վերջին զարգացումները և հետևանքները:

դ) Ուսումնասիրել պաղեստինյան հիմնախնդրի շուրջ արաբական և միջազգային դիրքորոշումներն ու որոշումները, հատկապես Օսլոյից և պաղեստինյան դաշտում պառակտումից հետո:

ե) Ուսումնասիրել իսրայելաբնակ արաբների դիրքորոշումը պաղեստինյան պառակտման, դրա լուծման հեռանկարների, ինչպես նաև պաղեստինյան քաղաքական գործընթացի և խաղաղության գործընթացի վերաբերյալ:

զ) Ուսումնասիրել Երուսաղեմը որպես Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու և ԱՄՆ դեսպանատունը Թել-Ավիվից Երուսաղեմ տեղափոխելու վերաբերյալ ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփի որոշման նկատմամբ ներպաղեստինյան, պաղեստինյան, արաբական և միջազգային արձագանքները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Աշխատանքի ժամանակագրական շրջանակը հիմնականում ընդգրկում է 1993 թ. Օսլոյի համաձայնագրի ստորագրումից մինչև 2017 թ.-ին Դոնալդ Թրամփի՝ Երուսաղեմը որպես Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու և ԱՄՆ դեսպանատունը Թել-Ավիվից Երուսաղեմ տեղափոխելու վերաբերյալ որոշմանն անմիջապես հաջորդած ժամանակահատվածը: Բնականաբար, պատմական համատեքստը վերականգնելու նպատակով անդրադարձ է արվել նաև 20-րդ դարասկզբին պաղեստինյան հիմնախնդրի ծագմանը, հետագայում տարբեր պաղեստինյան կազմակերպությունների ձևավորմանը, 1948 թ. Իսրայել պետության ստեղծմանը և անցյալ դարի 80-ականներից պաղեստինյան ժողովրդի մղած պայքարին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Պաղեստինյան հիմնախնդրի մասին բազմաթիվ հետազոտություններ են կատարվել, սակայն սույն աշխատանքը տարբերվում է մինչ այժմ իրականացված այլ հետազոտություններից նրանով, որ ներկայացնում է պաղեստինաբնակ քաղաքական և հասարակական գործիչների տեսակետները պաղեստինյան

հիմնախնդրի, դրա անցյալի ու ապագայի, ներպաղեստինյան զարգացումների վերաբերյալ: Այստեղ խնդրին անդրադարձ է արվում Օսլոյի համաձայնագրի, պաղեստինյան դաշտի վրա դրա ազդեցության, ավելի քան տասը տարի առաջ, այսինքն 2006 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո տեղի ունեցած պառակտման և պաղեստինյան հիմնախնդրի վերջնական լուծման գործընթացի առջև ծառացած վտանգների տեսանկյունից:

Առաջին անգամ անդրադարձ է կատարվում նաև պաղեստինյան հասարակական և քաղաքական գործիչների տեսակետներին Օսլոյի համաձայնագրի մանրամասների, ինչպես նաև վերջինիս հետևանքների ամբողջ պաղեստինյան ժողովրդի վրա՝ ներառյալ սփյուռքի, նրա դիրքորոշման և պաղեստինյան դաշտում քաղաքական ճգնաժամից դուրս գալու լուծումների որոնման շուրջ:

Աղբյուրների, ուսումնասիրությունների և հետազոտությունների պակասը լրացնելու նպատակով իրականացվել է դաշտային աշխատանք՝ պաղեստինյան ընդհանրական դիրքորոշմանն առավել մոտ և հստակ պատկերացում կազմելու համար: Փորձ է արվել անձնական հարցազրույցների միջոցով ընդգրկել Պաղեստինյան ինքնավարության տարածքի և իսրայելաբնակ արաբների տարբեր խմբերի ներկայացուցիչների տեսակետները առավել կարևոր և հրատապ խնդիրների վերաբերյալ:

Աշխատանքում համակողմանիորեն ներկայացվել է նաև ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփի՝ Երուսաղեմը որպես Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու և ԱՄՆ դեսպանատունը Թել-Ավիվից Երուսաղեմ տեղափոխելու վերաբերյալ որոշումն ու դրան պաղեստինյան, արաբական և միջազգային արձագանքները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրության մեթոդաբանական հենքը կազմում են գիտական հետազոտության իմացաբանական հիմքերը, պատմահամեմատական, պատմավերլուծական քննության, միջգիտակարգային հետազոտության մեթոդները, որոնք ապահովում են ատենախոսության շրջանակներում ավարտուն ուսումնասիրություն՝ հետազոտական համապատասխան արդյունքներով: Հետազոտության

կարևոր մեթոդներից է քաղաքական գործիչների և մտավորականների հարցումների մեթոդը, որը հնարավորություն է տվել վեր հանել իսրայելաբնակ արաբների կարծիքները տարբեր խնդիրների շուրջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնական դրույթներն ու հարցադրումները կարող են օգնել քաղաքականությամբ զբաղվող հաստատություններին իրենց համեմատական վերլուծություններում: Այս հետազոտությունը կարող է օգնել ընդհանուր քաղաքականությամբ զբաղվող և որոշումներ կայացնող պաղեստինյան գործիչների վրա՝ պատկերացնել առկա ներպաղեստինյան դիսկուրսը:

Հետազոտության դրույթները և վերհանված կարևորագույն հարցերը կարող են դրդել արտաքին կամ ներքին պայքարում ներգրավված պաղեստինյան առաջնորդներին՝ վերանայելու իրենց դիրքորոշումները և պաղեստինյան հարցի լուծմանն ուղղված ծրագրերը՝ օգտագործելով պաղեստինաբնակ տարբեր զանգվածների հավաքական դիրքորոշումները:

Արաբական փորձին ծանոթությունը կարող է նպաստել նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան կառույցների գործունեությանը, հայկական գիտական հանրությանը ծանոթացնել պաղեստինյան հիմնախնդրի և դրա շուրջ տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ ներքին՝ պաղեստինյան տեսակետին, ինչպես նաև նպաստել Մերձրավոր Արևելքում՝ տարածաշրջանում, որը հսկայական նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար, տեղի ունեցող իրադարձությունների ավելի խոր ըմբռնմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մի շարք դրույթներ և եզրակացություններ տպագրվել են Երևանի պետական համալսարանի արաբագիտության ամբիոնի կողմից հրատարակվող «Արաբագիտական ուսումնասիրություններ», Արևելագիտության ֆակուլտետի կողմից հրատարակվող «Արևելագիտության հարցեր» ժողովածուներում, Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ «Հայկական քաղաքագիտական հանդես»-ում, Բեյթ Բերլում հրատարակվող «Ալ-Հասադ» պարբերականում: Դրանք

նաև գիտական զեկուցումների և գիտական նախագծերի ձևով ներկայացվել են ԵՊՀ արաբագիտության ամբիոնում 2017-2018 թթ. կազմակերպված գիտաժողովների և սեմինարների ընթացքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքում օգտագործվել են խնդրին առնչվող արաբերեն և անգլերեն գիտական ուսումնասիրություններ և աղբյուրներ, լրատվական կայքերում հրապարակված հոդվածներ, ինչպես նաև մի շարք քաղաքական և հասարակական գործիչների[1] հետ անձնական հանդիպումների ժամանակ անցկացված հարցազրույցներ: Ընդ որում՝ հիմնական շեշտը դրվել է արաբ հեղինակների ուսումնասիրությունների վրա, քանի որ աշխատանքը նպատակ ունի վեր հանել բարձրացված խնդիրների շուրջ պաղեստինյան տեսակետը:

Օգտագործված գիտական նյութերից առավել կարևորում ենք Մուհսին Սալիհ Մուհամմադի[2], Մուստաֆա Մուրադ ալ-Դիբաղի[3], Մահիր ալ-Շարիֆի[4], Մահմուդ ալ-Ալուլի, Իլան Պապեի, Ջամիլ Հիլալի[5], Աուադ

---

[1] Այդ գործիչներն են Իսամ Մախուլը, Մուհամմադ Նաֆան, Աիդա Թուման, Մուհամմադ Բարաքան, Ջամալ ալ-Զահլական, Ահմադ ալ-Տայիբին, Իբրահիմ Աբու Ջաբիրը, Մահմուդ ալ-Ալուլը, Մասուդ Ղանահիմը, Ասադ Ղանիմը, Ռաիդ Սալահը և Իլան Պապեն:

[٢] محسن صالح محمد. فلسطين: سلسلة دراسات منهجية في القضية الفلسطينية _ نسخة الكترونية. كولالمبور _ ماليزيا، 2002.

محسن صالح محمد. القضية الفلسطينية خلفياتها التاريخية وتطوراتها المعاصرة. مركز الزيتونة للدراسات والاستشارات. بيروت، 2009.

[٣] مصطفى مراد الدباغ. بلادنا فلسطين. م. 2. القدس، 1991.

[٤] ماهر الشريف. البحث عن كيان: دراسة في الفكر السياسي الفلسطيني، 1908.

[٥] جميل هلال. النظام السياسي الفلسطيني ما بعد أوسلو: دراسة تحليلية نقدية. رام الله، 2006.

Ջամիլ Աբդ ալ-Կադիր Աուդայի[6], Մաջիդ Քայալիի[7], Զիյադ Ամրուի, Յուսեֆ Հայքալի[8], Իսամ Մախուլի, Իբրահիմ Աբու Ջաբիրի և Ահմադ Ալ-Տայիբիի ուսումնասիրությունները:

Մուհսին Սալիհ Մուհամմադի աշխատությունները հիմնականում նվիրված են արաբ ժողովրդի նոր և նորագույն պատմությանը, պաղեստինյան հիմնախնդրի պատմական պատճառներին և զարգացմանը, պաղեստինյան քաղաքական կյանքի մանրամասներին, հատկապես Բրիտանիայի և Ֆրանսիայի դերակատարմանը Սայքս-Պիկոյի համաձայնագրում, դրան հետևած քաղաքական իրավիճակին և պաղեստինյան ժողովրդի վրա ունեցած ազդեցությանը:

Մուստաֆա Մուրադ Ալ-Դաբբաղը մի շարք աշխատություններ ունի պաղեստինյան ժողովրդի խնդիրների վերաբերյալ, որոնցից առավել հայտնի է «Մեր երկիր Պաղեստինը» աշխատությունը· այն բաղկացած է Պաղեստինի, նրա պատմության ու առանձնահատկությունների վերաբերյալ տասնմեկ մասերից: Մեր ուսումնասիրության համար կարևոր աղբյուր է հանդիսացել նշված աշխատության՝ Բրիտանիայի կողմից հրեաներին տրված Բալֆուրի հռչակագրին վերաբերող հատվածը:

Մահիր ալ-Շարիֆը պաղեստինցի պատմաբան և հետազոտող է, ով իր աշխատություններում կենտրոնացել է պաղեստինյան ժամանակակից պատմության, գաղափարական մտքի, քաղաքական շարժումների, այդ թվում «Ֆաթհ»-ի, «Պաղեստինի ազատագրման կազմակերպության» (ՊԱԿ) -ի և պաղեստինյան պայքարում դրանց դերակատարման ուսումնասիրության վրա:

Ջամիլ Հիլալը պաղեստինցի հետազոտող է և քաղաքական ու սոցիալական թեմաներով հոդվածների հեղինակ: Նա զբաղվել է Օսլոյի

---

[6] عواد جميل عبد القادر عودة. إشكالية العلاقة بين حركة فتح وحركة حماس11 وأثرها على عملية التحول الديمقراطي في فلسطين (2004-2011) رسالة ماجستير غير منشورة، جامعة النجاح، فلسطين، 2011.

[7] ماجد كيالي. الصراع على السياسة والسلطة في الساحة الفلسطينية المقدمات والتداعيات وما العمل، أبو ظبي، 2009.

[8] يوسف هيكل. القضية الفلسطينية: تحليل ونقد. مطبعة الفج. يافا. 1937.

համաձայնագրերին հաջորդած շրջանում պաղեստինյան քաղաքական համակարգի և դրա նախադրյալների ուսումնասիրությամբ, վերլուծական հետազոտություններ է կատարել պաղեստինյան իրողության և դրա վտանգների, իշխանության համար պայքարի մասին:

Աուադ Ջամիլ Աբդ ալ-Կադիր Աուդային մասնագիտացած է քաղաքական պլանավորման և զարգացման հարցերում, իր աշխատություններում կենտրոնանում է «Ֆաթհ»-ի և «Համաս»-ի միջև հարաբերությունների և պաղեստինյան քաղաքական կյանքի փոխակերպումների վրա դրանց ազդեցության, պայքարի սրման վրա երկու շարժումների միջև գաղափարական տարաձայնությունների արտացոլման շուրջ:

Մաջիդ Քայալին գրող է և քաղաքական վերլուծաբան: Նրա աշխատությունները նվիրված են արաբա-իսրայելական հակամարտության, պաղեստինյան քաղաքական դաշտում իշխանության համար պայքարի ուսումնասիրությանը: Նա անդրադարձել է այն հարցերին, թե ինչպես է սկսվել հակամարտությունը, ինչ խնդիրներ են հաջորդել դրան, ինչպես նաև պաղեստինյան դաշտում պայքարի և հակամարտության կողմերի միջև պառակտման վերացմանն ուղղված փորձերին:

Յուսեֆ Հայքալը պատմաբան է, քաղաքական գործիչ և իրավաբան: Իր աշխատություններում ուսումնասիրում է պաղեստինյան հիմնախնդիրը և դրա պատմական զարգացումը՝ սկսած 1948թ.-ից՝ *Նակբայից*, այդ ժամանակաշրջանում արաբական բանակների դերակատարումը, անդրադառնում է պաղեստինցիների հետագա սփռմանը, քաղաքական շարժումների, առաջին հերթին՝ ՊԱԿ-ի ստեղծմանը և պաղեստինյան ժողովրդի իրավունքների՝ միջազգային մակարդակով ճանաչման հարցում դրանց դերին:

Սույն աշխատանքում, հատկապես երրորդ և չորրորդ գլուխներում, մեծապես օգտագործվել են մի շարք պաղեստինյան քաղաքական և հասարակական գործիչների, գիտնականների հետ անձնական հանդիպումների ժամանակ անցկացրած հարցազրույցներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացվում են ատենախոսության հիմնական հարցադրումները, ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը, լուսաբանվում են թեմայի արդիականությունը, հետազոտական խնդիրներն ու նպատակը, տրվում է օգտագործված գրականության համառոտ նկարագիրը:

Առաջին գլուխը, որը վերնագրված է **«Պաղեստինի ազատագրման կազմակերպության» (ՊԱԿ) և «Պաղեստինի ազգային ազատագրական շարժման» («Ֆաթհ») ստեղծումն ու զարգացումը. հայացք ներսից»**, բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցից առաջինում՝ ***«Պաղեստինյան հիմնախնդրի ձևավորումը և Իսրայել պետության ստեղծումը»,*** անդրադարձ է կատարվում պաղեստինյան հիմնախնդրի առաջացման պատմական նախադրյալներին: Անդրադարձ է կատարվում 1916 թ. կնքված Սայքս-Պիկոյի համաձայնագրին, արաբների հույսերին ու հավակնություններին վերջ դրած Բալֆուրի հռչակագրին (1917թ.), 1947թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի երկրորդ նստաշրջանում ընդունված թիվ 181 բանաձևին:

Երկրորդ ենթագլխում՝ ***«Պաղեստինի ազատագրման կազմակերպության» ստեղծումն ու գործունեությունը»,*** ներկայացված են «Պաղեստինի ազատագրության կազմակերպության» ստեղծմանն ու նրա նկատմամբ այդ ժամանակաշրջանի արաբական շարժումների և կուսակցությունների դիրքորոշմանը, ինչպես նաև պաղեստինյան քաղաքական համակարգի և որոշման ընդունման մեխանիզմների նկատմամբ ՊԱԿ-ի դիրքորոշմանը:

Երրորդ ենթագլխում՝ ***««Պաղեստինի ազգային ազատագրական շարժման» («Ֆաթհ») ստեղծումն ու գործունեությունը»,*** անդրադարձ է կատարվում «Ֆաթհ»-ի ստեղծման նախադրյալներին, ստեղծման պրոցեսին և հետագա գործունեությանը: Շարժումն ի հայտ եկավ որպես մի քանի հոգու գաղափար, այնուհետև վերաճեց կազմավորման, ապա՝ ազգային համապարփակ ծրագրի, և, ի վերջո, շարժման, որի առաջամարտիկ լինելն ընդունվեց պաղեստինյան ժողովրդի մեծամասնության կողմից: ՊԱԿ-ի միջոցով «Ֆաթհ»-ի ներգրավվումը

խաղաղության գործընթացին տարբեր մակարդակներում կարևոր փոխակերպում իրականացրեց շարժման գաղափարական կառուցվածքի, քաղաքական դիսկուրսի և Իսրայելի հետ պայքարի նկատմամբ դիրքորոշման մեջ, ինչի արդյունքում շարժումը հրաժարվեց բռնությունից և 1967 թվականին գրավյալ պաղեստինյան տարածքներում պաղեստինյան պետություն ստեղծելու պահանջից, չնայած, որ շարժման սկզբունքները և նպատակները, որոնք ստեղծումից ի վեր մնացել են անփոփոխ, ենթադրում են վերացնել սիոնիստական կազմավորումը և ամբողջությամբ ազատագրել պաղեստինյան ազգային տարածքները, ինչին հասնելու միակ ճանապարհը զինված պայքարն է:

Երկրորդ գլուխը՝ վերնագրված ***««Համաս» շարժումը՝ ստեղծումն ու գաղափարախոսությունը, «Համաս»-ի և «Ֆաթհ»-ի միջև բախումը»***, բաղկացած է չորս ենթագլուխներից: Առաջինում՝ *«Համաս» շարժման ստեղծումը, գաղափարախոսությունն ու գործունեությունը»*, ներկայացվում են «Մուսուլման եղբայրներ»-ի շարունակությունը համարվող շարժման ստեղծման նախադրյալները, պատճառները, ստեղծման պատմությունը, գաղափարախոսությունն ու կանոնադրությունը: Հիմնական շեշտը դրված է այս քաղաքական շարժման կողմնորոշման, նրա գործունեության, հիմնական նպատակների, ինչպես նաև ժամանակի ընթացքում փոփոխությունների վրա: Հատուկ ուշադրություն է դարձվում Պաղեստինում խաղաղության և քաղաքական վերափոխումների գործընթացում «Համաս»-ի դիրքորոշմանը:

Այս գլխի երկրորդ՝ ***«Համաս» շարժման դիրքորոշումը պաղեստինյան հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ»,*** ենթագլխում ներկայացվում են այն պատճառները և գործոնները, որոնք ընդհանուր առմամբ կանգնած են «Համաս»-ի՝ Մերձավոր Արևելքում խաղաղության գործընթացի մեջ չմտնելու կամ դրան դիմակայելու ետևում, ինչպես նաև մի շարք սկզբունքներ, որոնց վրա հիմնվում է Իսրայելի նկատմամբ «Համաս»-ի մերժողականությունը: Ներքին հակամարտությունների, տեղի ունեցած փոփոխությունների և դրանց շուրջ արաբական ու միջազգային առճակատումների պատճառով 2017 թ. «Համաս»-ը նոր քաղաքական փաստաթուղթ հրապարակեց, որում ոչ միայն չչեղարկեց իր կանոնադրությունը, այլև դրան

քաղաքական արդարացումներ հավելեց՝ քողարկելու համար շարժման ներքին պայքարը հատկապես վերջին կառուցվածքային փոփոխություն–ներից հետո: Որպեսզի «Համաս»-ի հռչակագիրը չընկալվի որպես 1988 թ. ընդունված կանոնադրության փոփոխություն, այն վերնագրվել է «Հիմնական սկզբունքների և քաղաքականությունների փաստաթուղթ»: Վերջինիս նորույթն այն է, որ «Իսլամի պետություն» հռչակելու փոխարեն նպատակ է սահմանվում ազատագրել Պաղեստինն ու դիմադրել սիոնիստական ծրագրին: Սա նշանակում է, որ այն հիմնվում է կրոնական և ազգային վարքագծի համադրման վրա: Փոփոխությունները կատարվել են հին տեքստում կոսմետիկ հավելումներ անելով, ինչը նշանակում է նաև մայր շարժման նկատմամբ «Համաս»-ի անվերապահ հավատարմություն:

Երրորդ ենթագլխում՝ ***«Համաս» և «Ֆաթհ» շարժումների միջև առկա տարաձայնություններն ու առճակատումները»***, անդրադարձ է կատարվում «Ֆաթհ» և «Համաս» շարժումների տարաձայնությունների առաջացման պատճառներին, որոնց շատ ավելի խորն են, քան պարզապես իսրայելա-պաղեստինյան հակամարտության ձևի շուրջ գաղափարախոսական պայքարը: «Համաս»-ը կրոնաքաղաքական շարժում է, որն իր համար որպես կենսակեպ ու սահմանադրություն է ընտրել կրոնը: Նրա «քաղաքական ծրագիր»-ը մերժում է Իսրայելի հետ բանակցելու և խաղաղ կարգավորման գաղափարը՝ ինչ գնով էլ դա լինի: Այդ ամենի պատճառով «Համաս»-ը հրաժարվել է բանակցային գործընթացի մաս կազմել, քանի որ այն ուղղված էր Պաղեստինյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը, իսկ շարժումը խնդրի լուծումը տեսնում է զինված պայքարի միջոցով: Շարժումն իրեն պատասխանատու է համարում Պաղեստինի պաշտպանության համար, ինչը հակասություն է առաջացնում «Ֆաթհ» շարժման հետ, քանի որ վերջինս ՊԱԿ-ի կազմավորումներից մեկն է և կիսում է հիմնախնդրի կարգավորման շուրջ ՊԱԿ-ի որդեգրած քաղաքականությունը:

Չորրորդ ենթագլուխը՝ ***«Համաս» և «Ֆաթհ» շարժումների հաշտության հնարավորությունները պաղեստինյան հակամարտու–թյան կարգավորման ապագան»,*** ներկայացվում է շարժումների նպա–տակը հակամարտության կարգավորման նկատմամբ, որն, ըստ էության, նույնն է: Այս ենթագլխում ցույց է տրվում, որ առանց այդ նպատակին

հասնելու ուղիների վերաբերյալ «Ֆաթհ»-ի և «Համաս»-ի տարաձայնու–թյունների հաղթահման անհնար է վերջնական արդյունքի հասնել:

Երրորդ՝ «Պաղեստինյան հասարակական-քաղաքական կարծիքը ներպաղեստինյան խնդիրների և պաղեստինյան պետության ապագայի վերաբերյալ» վերնագրված գլուխը ներկայացնում է Իսրայելում մի շարք արաբ քաղաքական առաջնորդների շրջանում իրականացված հարցման արդյունքները. հարցումը նպատակ ուներ ուսումնասիրելու ներպաղեստինայան իրավիճակի, «Ֆաթհ» և «Համաս» շարժումների միջև տեղի ունեցած պառակտման, պաղեստինյան հիմնախնդրի վրա դրա ազդեցության, պաղեստինյան պետության ապագայի նկատմամբ նրանց դիրքորոշումը:

Այս գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից: Դրանցից առաջինում՝ ***«Իսրայելում գործող պաղեստինյան հասարակական-քաղաքական կազմակերպությունները և դրանց դիրքորոշումը «Համաս»-ի և «Ֆաթհ»-ի հարաբերությունների վերաբերյալ»***, ներկայացվում են իսրայելաբնակ արաբների կողմից ստեղծված «Խաղաղության և հավասարության դեմոկրատական ճակատ», «Ազգային դեմոկրատական դաշինք» և «Հանուն փոփոխությունների արաբական միասնական ցուցակ» քաղաքական կուսակցությունների ծրագրերը, նպատակները և «Համաս»-ի ու «Ֆաթհ»-ի հարաբերությունների վերաբերյալ դրանց դիրքորոշումը:

Այս գլխի երկրորդ ենթագլխում՝ ***«Համաս»-ի, «Ֆաթհ»-ի և պաղեստինյան քաղաքական ուժերի միջև տարաձայնությունների պատճառներն ու արմատները»***, փորձ է արվում ներկայացնել «Ֆաթհ» և «Համաս» շարժումների միջև տեղի ունեցած պառակտումը և պաղեստինյան հիմնախնդրի վրա ընդհանուր առմամբ դրա ունեցած բացասական ազդեցությունը, որոնք դրդեցին իսրայելաբնակ արաբներին՝ միջամտելու անջրպետը վերացնելու համար, և բազմաթիվ գաղափարներ առաջ քաշել՝ միտված միմյանց հետ պայքարող կողմերին հաշտեցնելուն, որոնք, ըստ էության, գաղափարական պայքարի քողի տակ պայքարում էին հանուն իշխանության:

Երրորդ ենթագլխում՝ ***«Իսրայելահպատակ արաբ պաղեստինցի գործիչների դիրքորոշումը պաղեստինյան հակամարտության խաղաղ կարգավորման և ներպաղեստինյան հակասությունների նկատմամբ»,***

ներկայացվում են Իսրայելում մի շարք արաբ քաղաքական առաջնորդների շրջանում մեր կողմից իրականացված՝ վերոնշյալ թեմաների շուրջ հարցման արդյունքները: Իսրայելաբնակ արաբները հետաքրքրություն են ցուցաբերում պաղեստինյան դաշտում տեղի ունեցող ցանկացած զարգացման նկատմամբ և դա անում են Արևմտյան ափում և Գազայի հատվածում իրենց ազգակիցներին ներկայացրած նախաձեռնությունների և առաջարկությունների միջոցով, որոնք միտում ունեն դադարեցնելու քաղաքական առաջնորդների միջև տեղի ունեցող ցանկացած տարաձայնություն կամ հարաբերությունների վատթարացում: Պաղեստինյան պառակտման մասին հիշատակված կարծիքների հիման վրա կարելի է առանձնացնել երկու շարժումների միջև տարաձայնության չորս հիմնական պատճառ. 1. գաղափարական, դավանաբանական և գաղափարախոսական հակասությունը, ինչը հանգեցրեց նրանց միջև անհամաձայնության, ինչն էլ իր հերթին հանգեցրեց հակամարտության, որը կար դեռևս «Համաս»-ի ստեղծումից ի վեր, սակայն ավելի ակնհայտ դարձավ 2006 թ· ընտրություններից հետո, 2. իշխանության համար մղվող պայքարը, որն ի հայտ եկավ 2006 թ· Օրենսդրական խորհրդի ընտրություններում «Համաս»-ի հաղթանակից և Ինքնավարության կողմից դրա անտեսման հետևանքով, 3. արաբական և օտար ուժերի միջամտությունները, որոնք չեն ցանկանում պաղեստինյան ժողովրդավարության կայացումը, և ուզում են իրենց քաղաքականությունը թելադրել պաղեստինյան իշխանությանը, 4. դիմադրության ոճը, որը որդեգրել են «Ֆաթհ» և «Համաս» շարժումները. «Ֆաթհ»-ը կողմնակից է խաղաղ լուծմանը և Իսրայելի հետ բանակցելուն, իսկ «Համաս»-ը ցանկանում է շարունակել զավթողականության դեմ զինված պայքարը:

Չորրորդ՝ ***«Իսրայելահպատակ պաղեստինցի գործիչների տեսլականը ներպաղեստինյան հակասությունների հաղթահարման և Պաղեստին պետության ապագայի վերաբերյալ»*** ենթագլխում ներկայացվում են հարցված խմբի կարիքները ներպաղեստինյան ճգնաժամի հաղթահարման, հակասությունների հարթման և ապագա հնարավոր զարգացումների վերաբերյալ: Ներքին տարաձայնությունների արդյունքում ներկայումս պաղեստինյան դաշտում տիրող ընդհանուր իրավիճակը հասել է ճամփաբաժանի: Պաղեստինաբնակ արաբները,

լինելով պաղեստինցի ժողովրդի անբաժանելի մասը, երկրի ներսում իրենց վրա են կրում դրա ազդեցությունը, չնայած նրանց անձնական շահը ստիպում է հաշվի նստել այն իրականության հետ, որում ապրում են որպես Իսրայել պետության քաղաքացիներ: Այս թեմայի մասին հարցվածների պատասխանները ցույց են տալիս, որ թեև ընտրություններից հետո Գազայի դեպքերի, զինված բախումների, Իսրայելի հետ խաղաղության գործընթացի և միջազգային դիրքորոշումների վրա դրանց ազդեցության շուրջ որոշ պարզ տարբերություններ կան, բոլոր հարցվածներն էլ գտնում են, որ ընտրությունների արդյունքներն ազդել են պաղեստինյան դիրքի վրա՝ միջազգային ատյաններում պաղեստինյան հիմնախնդրի համար հետընթաց ապահովելով, վատթարացնելով աշխարհի վերաբերմունքը պաղեստինցիների նկատմամբ, ազդելով մյուս պետությունների հետ պաղեստինյան հարաբերությունների վրա, ինչպես նաև պաղեստինյան պետություն ստեղծելու մասին պաղեստինյան ազգային ծրագրի և Իսրայելի առջև պաղեստինյան դիրքերի թուլացման վրա:

Չորրորդ գլուխը՝ «**Երուսաղեմի հիմնախնդիրն ու դրա շուրջ միջազգային, արաբական և ներպաղեստինյան դիսկուրսը**», բաղկացած է ութ ենթագլուխներից: Առաջինում՝ «***Երուսաղեմի առանձնահատկությունը և դրա նկատմամբ ամերիկյան քաղաքականությունը***», անդրադարձ է արվում Երուսաղեմի առանձնահատկությանը և ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի՝ Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու և ԱՄՆ դեսպանություն այնտեղ տեղափոխելու վերաբերյալ որոշման դրդապատճառներին: Երուսաղեմն ունի իր պատմական, կրոնական և քաղաքական առանձնահատկությունները, և Երուսաղեմի հարցը արաբա-իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարևորագույն խնդիրներից մեկն է: Երուսաղեմի ճանաչումը որպես Իսրայելի մայրաքաղաք Թրամփի՝ իր կառավարման առաջին իսկ օրերից կորցրած ժողովրդականությունը վերականգնելուն ուղղված յուրօրինակ գործողություն էր: Բացի դրանից, ամերիկյան քաղաքական շրջանակները կարծում են, որ Թրամփը ենթարկվել է հրեական լոբբիի ճնշմանը ինչպես Միացյալ Նահանգներում, այնպես էլ անցյալ մայիսին Թել-Ավիվ կատարած այցի

ժամանակ, որի ընթացքում նա խոստացավ Բենիամին Նեթանյահուին, որ Երուսաղեմը ճանաչելու հարցը առաջնահերթություն է լինելու:

Այս գլխի երկրորդ՝ «***Երուսաղեմի հիմնախնդրի նկատմամբ ԱՄՆ նախկին դիրքորոշումը և ընդունած որոշումները նախքան Դ.Թրամփի՝ իշխանության գալը»,*** ենթագլխում ներկայացվում են ԱՄՆ մի շարք նախագահների դիրքորոշումներն ու ընդունած որոշումները Երուսաղեմի առնչությամբ՝ սկսած Հարրի Թրումենից մինչև Բարաք Օբամա:

Երրորդ ենթագլխում՝ «***ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի որոշումը և դրա հետևանքները»,*** մանրամասն ներկայացվում է որոշումը, թվարկվում են այն գործոնները, որոնք ազդեցություն են ունեցել այդ որոշման կայացման վրա, անդրադարձ է արվում նաև այն հետևանքներին, որոնց կարող է հանգեցնել այդ որոշումը: Իսրայելամետ ամերիկյան քաղաքականությունը կար դեռևս Թրամփից առաջ և էլ ավելի ուժգնացավ նրա օրոք: Թրամփի որոշումը վերջ դրեց ԱՄՆ արտաքին քաղաքականության տասնամյակների ավանդույթին՝ իսրայելա-պաղեստինյան խաղաղության պայմանագրի բացակայության պայմաններում խուսափել Երուսաղեմը որպես Իսրայելի մայրաքաղաք ճանաչելուց: Որոշումը կխախտի Երուսաղեմի վերաբերյալ միջազգային կոնսենսուսը և կկանխորոշի խնդրի հանգուցալուծումը, ինչը պետք էր թողնել երկու կողմերի միջև վերջնական բանակցություններին, և հնարավոր է նաև, որ ավելացնի տարածաշրջանում լարվածությունը:

Չորրորդ ենթագլխում՝ «***Թրամփի որոշման նկատմամբ պաղեստինյան դիրքորոշումը»,*** ներկայացվում է պաղեստինյան մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների արձագանքը Դոնալդ Թրամփի որոշմանը: Այդ որոշման արդյունքում պաղեստինցիները որոշեցին դադարեցնել ԱՄՆ կառավարության հետ իրենց կապերը և հրաժարվեցին ընդունել ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսին՝ տարածաշրջան կատարած նրա այցի ժամանակ: Դեպքերի նման զարգացմամբ նրանք ուղերձ հղեցին ամերիկացիներին՝ ասելով, որ խաղաղ գործընթացում նրանց դերն արդեն ավարտվել է: Դա պաղեստինցիներից պահանջում է միջազգային հանրության կողմից նոր միջնորդ փնտրել, որը կկարողանա օգնել իսրայելական և արաբական երկու պետությունների ստեղծման խնդրի լուծմանը:

Հինգերորդ ենթագլխում՝ «**Տարածաշրջանի պետությունների դիրքորոշումները Դ. Թրամփի որոշման նկատմամբ**», ներկայացվում են Սաուդյան Արաբիայի, Թուրքիայի, Եգիպտոսի, Հորդանանի, Իրանի առաջնորդների և բարձրաստիճան մի շարք պաշտոնյաների դիրքորոշումը Երուսաղեմի վերաբերյալ Դ.Թրամփի որոշման նկատմամբ:

Այս գլխի վեցերորդ ենթագլխում՝ «***Դ. Թրամփի որոշման նկատմամբ իսրայելական դիրքորոշումը***», ներկայացված է Իսրայելի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների արձագանքը որոշմանը: Իսրայելի կառավարությունը նախատեսում է հաստատել այնտեղ 14 հրեական բնակավայրի շինարարության նախագիծը:

Յոթերորդ՝ «***Դ. Թրամփի որոշման նկատմամբ միջազգային դիրքորոշումները»,*** ենթագլխում անդրադարձ է կատարվում այդ որոշմանը ՄԱԿ-ի և Եվրամիության բացասական արձագանքին: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստից հետո Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Շվեդիայի, Գերմանիայի և Իտալիայի դեսպանները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որում դատապարտել են ԱՄՆ դիրքորոշումը, որը, նրանց կարծիքով, հակասում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերին և չի նպաստում Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատմանը: Ներկայացված է Չինաստանի և Ռուսաստանի մտավախությունը, որ Թրամփի քայլը կհանգեցնի տարածաշրջանում լարվածության ավելացմանը:

Վերջին՝ ութերորդ ենթագլխում՝ «***Իսրայելահպատակ արաբների դիրքորոշումը Թրամփի որոշման նկատմամբ»,*** ներկայացված է հարցմանը մասնակցած իսրայելաբնակ քաղաքական, մշակութային և հասարակական գործիչների վերաբերմունքը Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու և ԱՄՆ դեսպանատունն այնտեղ տեղափոխելու վերաբերյալ որոշմանը: Հարցվածների կարծիքով՝ Դ. Թրամփը փորձում է իրեն վեր դնել միջազգային օրենքներից, որոնց շուրջ համաձայնություն կա ձեռք բերված: Սա է պատճառը, որ նա խայտառակ կերպով խախտում է միջազգային նորմերը՝ ակնհայտորեն սիոնիստական լոբբիի կողմն անցնելով, այսինքն՝ նա կողմնակալ է մի կողմի նկատմամբ՝ ի վնաս մյուսի, միջազգային հարաբերություններում հիմնվում է անհանդուրժողականության և այլոց իրավունքներն ու միջազգային

նորմերը չհարգելու քաղաքականության վրա: Նման իրավիճակում աշխարհում խաղաղության և ժողովուրդների իրավունքների դեմ իր ռասայական խտրականությամբ նա իր երկիրը մտցնում է ժողովուրդների թշնամիների խայտառակ ցուցակի մեջ:

Ատենախոսության վերջում ներկայացվում են հետևյալ հիմնական ***եզրակացությունները***.

1. 1988 թ.-ի սկզբին Թունիսում՝ «Մուսուլման եղբայրներ» շարժման մաս կազմող «Համաս»-ի ստեղծումը հետևանք էր «Ֆաթհ» շարժման ձեռքում պաղեստինյան որոշման կենտրոնացման, դրանում նրա բացառիկ դերակատարման և այլ ուժերին մարգինալացնելու փորձերի: Այստեղից, ինչպես նաև իրար հաջորդած հետագա իրադարձություններից և զարգացումներից կարող ենք եզրակացնել, որ արաբական ռեժիմները, գաղութատիրությունը և ազատագրական շարժումների ռեակցիոն ուժերը նպատակ էին դրել թուլացնել և մարգինալացնել դրանք: Դա կհանգեցներ նոր քաղաքական և ռազմական շրջանակների ստեղծմանը (ինչն էլ իրականում տեղի ունեցավ) և պայքարի մի մասը ներքին հակամարտությունների վերածելուն, ինչը հատկապես ակնհայտ դարձավ պաղեստինյան երկու հիմնական կողմերի՝ «Ֆաթհ»-ի ու «Համաս»-ի միջև պառակտումից հետո:

Հարցված իսրայելաբնակ քաղաքական և հասարակական գործիչների կարծիքով, չնայած այս երկու շարժումներն ի սկզբանե ստեղծվել էին «Մուսուլման եղբայրներ»-ի միջուկից, բախումը ծագել է հիմնադրույթների և շահերի, իսկ այնուհետև՝ պաղեստինյան հիմնախնդրի վերաբերյալ արտաքին օրակարգերի շուրջ՝ հնարավորություն տալով արտաքին ուժերին հակամարտության կողմերին օգտագործել ի շահ իրենց: Արդյունքում, հակամարտությունը թուլացրեց ՊԱԿ-ի բոլոր ուժերին և հանգեցրեց պաղեստինյան դաշտի մասնատմանը: «Համաս»-ի կողմից Գազայի հատվածի վրա վերահսկողությունը նույնպես թուլացրեց այդ նույն ուժերին և նվազեցրեց նրանց հնարավորությունները: Դա հանգեցրեց պաղետինյան դաշտում արաբական և ոչ արաբական շահերի ուժեղանալուն, ինչն էլ կրկին մեծացրեց արտաքին ուժերի «ախորժակը»: Պաղեստինցիները հայտնվեցին բարդ իրավիճակում՝ գտնվելով եվրոպական և ամերիկյան

շահերի կիզակետում, որոնք ուղղված էին Պաղեստինյան խնդրին վերջ դնելուն, նրա ապագան տնօրինելուն, պաղեստինյան ինքնության ոչնչացմանը և Պաղեստինի հարցը մարդու իրավունքների հարցից ծառայությունների մատուցման և երկրորդական խնդրի վերածելուն:

2. «Համաս»-ի ի հայտ գալով և նրա՝ ՊԱԿ-ի ու նրա խմբակցությունների հաշվին հանդես գալու, իրեն որպես պաղեստինյան ժողովրդին ներկայացնող այլընտրանք ներկայացնելու փորձերից հետո հակամարտությունն սկսեց ավելի հստակ ուրվագծվել հատկապես «Ֆաթհ»-ի և «Համաս»-ի միջև:

Հարցված խմբի կարծիքով, հակամարտության երկու կողմերը որևէ գործնական և իրատեսական լուծում չգտան ներքին հակամարտությունը կարգավորելու և արտաքին սպառնալիքներին դիմակայելու համար: Դա հստակ պատկերացում է տալիս այն մասին, որ «Համաս» շարժումն իսլամական կրոնական քողի տակ թաքցնում է երկրից դուրս գտնվող իր հեռանկարները, շահերը և կապերը: «Ֆաթհ»-ը նույնպես, որպես ազգային որոշման միակ կայացնող՝ ՊԱԿ-ի մյուս խմբակցությունների հաշվին (քանի որ վերջինս դարձել է զուտ ձևական կազմավորում) ցանկանում է գերիշխել ազգային որոշման և պաղեստինցիների կարողությունների վրա: Այդ իսկ պատճառով այն նույնպես ձգտում է նեղ շահերի, ինչը հանգեցրել է նրան, որ «Ֆաթհ»-ի քաղաքականությունը ստորադասվել է արաբական և արևմտյան օրակարգերին, որոնք կապված են պաղեստինյան ժողովրդի գործին հիմնականում վնաս հասցնող շահերի հետ: Պաղեստինյան մյուս ուժերը նման հակասությունների և հակամարտության ֆոնին մարգինալացվել են: Հարցվածները վստահ են, որ դա այդպես կշարունակվի, քանի դեռ բոլորը չեն ճանաչել ազգային շահը, չեն ենթարկվել փոխհամաձայնեցված համընդհանուր օրենքի, չեն անցկացվել համընդհանուր համապետական ընտրություններ, և չի ստեղծվել մի ուժ, որը կձգտի պաղեստինյան հիմնախնդիրը արդար և անկողմնակալ լուծման ուղու վրա դնելուն ուղղված որոշում կայացնել:

3. Իսրայելահպատակ արաբների դիրքորոշումները պառակտման, քաղաքական գործընթացի և խաղաղ կարգավորման առնչությամբ կարելի է բաժանել չորս խմբի.

ա) «Ֆաթհ» և «Համաս» շարժումների միջև գաղափարա–խոսական, գաղափարական և դավանաբանական տարաձայնու–թյուններն են պատճառը, որ նրանք համաձայնության չեն եկել.

բ) նրանց միջև բախումը շահերի բախում է և պայքար հանուն իշխանության.

գ) բախման պատճառը պաղեստինյան հարցում արտաքին և արաբական միջամտություններն են, որոնք ցանկանում էին իրենց շահերն ու տեսակետները պարտադրել պաղեստինյան դիքորոշմանը.

դ) պատճառը պայքարի և դիմադրության ձևերի միջև տարբերությունն է, քանի որ «Ֆաթհ»-ը հայտարարել է, որ հավատում է խաղաղ կարգավորմանն ու բանակցություններին, մինչդեռ «Համաս»-ը հայտարարել է, որ շարունակելու է զավթիչ ուժերի դեմ զինված պայքարը: Չնայած «Համաս»-ը մասնակցեց ընտրություններին և Օսլոյի համաձայնագրի շրջանակում ու դրա հովանավորմամբ առաջատար դիրքի հասավ Ինքնավարությունում, բայց շահերն ու դրանց բախումը նրա համար գերակայություն էին ներքին պայքարում: Իսրայելաբնակ արաբները փորձեցին օգնել լուծում գտնելու, սակայն նրանք չկարողացան վերջ դնել պառակտմանը, քանի որ մարգինալ դիրք էին զբաղեցնում, միևնույն ժամանակ՝ չունեին որևէ գործնական պաշտոնական կամ ժողովրդական ծրագիր, որը կնպաստեր հակամարտության լուծմանն ու պառակտման վերացմանը: Հարցվածները վստահ են, որ Իսրայելը, եվրոպական երկրները, ԱՄՆ-ն, արաբական որոշ երկրներ և պաղեստինյան կողմերը աշխատում են հակամարտության և պառակտման գործընթացները սնելու ուղղությամբ, որպեզի չկայանան ո՛չ Պաղեստինյան պետությունը, ո՛չ էլ Պաղեստինի անկախ քաղաքական որոշումը:

4. Օսլոյի համաձայնագիրը, ըստ հարցվածների, պաղեստինցիների իրավունքների նկատմամբ անարդար համաձայնագիր էր, որը չի լուծել փախստականների վերադարձի իրավունքի խնդիրը և չի հստակեցրել Պաղեստինյան պետության կամ Իսրայելի պետության սահմանները: Փոխարենը այն պաղեստինյան ժողովրդի ապագայի հաշվին Իսրայելին տվել է ընդլայնվելու, բնակավայրեր կառուցելու, բնական ռեսուրսներից և անցակետերից օգտվելու լայն հնարավորություններ: Զավթիչ ուժերի հետագա գործողությունները հանգեցրեցին պաղեստինյան ժողովրդի հեռանկարների, ծրագրերի և

հույսերի փլուզման, պայքարի կամ դրա մի մասի՝ շահերի վերածման, և Ինքնավարության՝ զավթիչների ձեռքում գործիք դառնալու:

5. Հարցված գործիչները կարծում են, որ Օսլոյի համաձայնագրի և դրան հաջորդած պառակտման պայմաններում Պաղեստինի իրավիճակի վերաբերյալ արաբական դիրքորոշումներն անարդյունավետ են: Արտաքին օրակարգերն ու շահերը իրենց դերն ու տնտեսական ազդեցությունն ունեն պաղեստինյան խնդրի ընթացքի վրա:

6. ԱՄՆ-ի կողմից Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք ճանաչելը ոչ միայն հանգեցրեց խաղաղ բանակցությունների և Օսլոյի համաձայնագրի՝ փակուղու առաջ հայտնվելուն, այլև բացասական կերպով վերջ դրեց այդ գործընթացին: Պաղեստինցիների համար սա համարվեց սկիզբ իսրայելցիների հետ համաձայնագրերից, պայմանավորվածություններից և սահմանափակումներից ազատվելու համար: Ըստ հարցված գործիչների, սա Պաղեստինի ղեկավարությունից պահանջում է վերանայել իր հետագա ռազմավարությունը և ներքին ու արտաքին դիրքորոշումները թե՛ ծրագրերի և դաշինքների, թե՛ պաղեստինյան ազգային խնդրի հետագա քաղաքական քարտեզը փոխելու համար այլ ուղիներ և կողմեր փնտրելու առումով:

Ըստ հարցված իսրայելաբնակ գործիչների, ԱՄՆ դիրքորոշումը համարվում է միջազգային իրավունքի նորմերի խախտում, և բոլոր միջազգային ջանքերը պետք է միավորվեն ՄԱԿ-ում և տարածաշրջանային կազմակերպություններում՝ այն դադարեցնելու համար: Այս որոշումը նաև դուռ է բացում Իսրայելին սատարող երկրների համար՝ կայացնելու նմանատիպ որոշումներ:

Հարցված գործիչները վստահ են, որ պաղեստինյան դիրքորոշման ամրությունն ու ներքին դիրքորոշումների միասնությունը, անշուշտ, ամենամեծ գործոնն են պաղեստինյան հիմնախնդրի և Պաղեստինի ժողովրդի գոյության ու ապագայի վերաբերյալ ցանկացած ծրագրի արձագանքելու հարցում: Պաղեստինյան ազգային շարժումը պետք է ճանապարհ գտնի ազգային միասնության և բոլորի համար ընդունելի դիրքորոշման հասնելու համար, որպեսզի կարողանա այդ ծրագրին գործնականորեն դիմակայել, հակամարտությունը դեպի գործնական և իրական այլընտրանքներ ուղղել և փնտրել դաշնակիցներ, որոնք կծառայեն ազգային գործի ապագային՝ Թրամփի պլանը չեզոքացնելու և դրան միջազգային մակարդակով դիմակայելու համար:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. «Համաս» շարժումը· ստեղծումն ու գաղափարախոսությունը: Արաբագիտական ուսումնասիրություններ, համար 8, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 79-95

2. «Համաս» շարժման դիրքորոշումը Պաղեստինի ազատագրման կազմակերպության և Օսլոյի համաձայնագրի նկատմամբ: Արաբագիտական ուսումնասիրություններ, համար 9, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017, 107-31

3. Իսրայելում պաղեստինցի արաբ քաղաքական առաջնորդների դիրքորոշումը պաղեստինյան պառակտման և պաղեստինյան պետության ստեղծման շուրջ: Արաբագիտական ուսումնասիրություններ, համար 10, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, 96-113

4. «Պաղեստինի ազգային ազատագրական շարժման» («ՖԱԹՀ») ստեղծումն ու զարգացումը: Արաբագիտական ուսումնասիրություններ, համար 10, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, 61-75

5. «Ֆաթհ» և «Համաս» շարժումների հակամարտությունը. գաղափարախոսությունների և շահերի բախում: Հայկական քաղաքագիտական հանդես, համար 2, Երևան, 2019, 107-130

6. Conflict between Fatah and Hamas movements: Clash of ideologies and interests. Armenian Journal of Political Science 2(9) 2018, 79-94

7. " قرار ترامب وانعكاساته على الواقع الفلسطيني والعالمي". مجلة الحصاد، العدد 8، الكلية الاكاديمية، بيت بيرل، 2018، ص 109-32.

Абу Заид Али Муса

ВНУТРИПАЛЕСТИНСКИЕ ДИСКУССИИ И ПРОТИВОРЕЧИЯ В КОНТЕКСТЕ ПАЛЕСТИНО-ИЗРАИЛЬСКОГО ДИСКУРСА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук
по специальности 07.00.02- «Всемирная история».
Защита состоится 30-го июня, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего
при Институте востоковедения НАН РА,
по адресу: 0019, г. Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Основной задачей данного исследования является изучение позиции проживающих в Израиле арабов относительно палестинского раскола, перспектив его преодоления, а также в отношении палестинского политического процесса и мирного урегулирования. Изучение этой темы имеет как научное, так и прикладное значение. По палестинской проблеме было проведено множество исследований, но эта работа отличается от других исследований, проведенных до сих пор, тем, что она представляет взгляд изнутри, т.е. взгляд палестинских политиков и общественных деятелей, на палестинский вопрос, его прошлое и будущее, а также внутри палестинские процессы.

Диссертация состоит из Введения, четырех глав, Заключения, списка использованной литературы.

Во Введении обоснована актуальность темы, определены цели и задачи работы, представлена научная новизна, а также дан обзор и анализ использованной литературы.

В первой главе - «Создание и развитие Организации Освобождения Палестины (ООП) и Палестинское национально-освободительное движение («Фатх»): взгляд изнутри» - представлены исторические предпосылки возникновения Палестинского вопроса. Здесь представлены причины создания Организации Освобождения Палестины, развитие событий, предшествующих созданию организации и позиция арабских движений и партий того периода по отношению к нему, а также позиция ООП в отношении палестинской политической системы и механизмов принятия решений.

Во второй главе - Движение ХАМАС: создание и идеология, конфликт между движениями ХАМАС и ФАТХ – представлены создание «Движения исламского сопротивления» - ХАМАС, его позиция в отношении ООП, соглашения Осло, мирного процесса и политических изменений в палестинской сфере. Здесь рассматривается оппозиционная идеология ХАМАС, история ее возникновения и развития, а также позиция ХАМАС по отношению к идее переговоров с Израилем в целом. В этой главе представлен также конфликт между движениями ХАМАС и ФАТХ, его причины, последствия, а также возможные дальнейшие пути развития отношений.

В третьей главе – Палестинское общественно-политическое мнение по палестинскому вопросу и будущее палестинского государства – рассматривается политический и идеологический диалог в Палестине в целом, детали конфликта между ХАМАС и ФАТХ, причины и корни политических разногласий между двумя движениями и другими группами. Проведенные нами интервью представляют взгляды арабских политиков, общественных деятелей и ученых, проживающих в Израиле, на причины палестинского раскола, их позицию по мирным соглашениям и их роль, их видение решения и независимость палестинского национального решения.

В четвертой главе - Проблема Иерусалима и международный, арабский и внутри палестинский дискурс по нему – рассматривается решение бывшего президента США Дональда Трампа об объявлении Иерусалима столицей Израиля и перенесении туда посольства США, а также израильская, арабо-исламская и международная реакция на нее. В этой главе также представлены взгляды группы арабских политиков, общественных деятелей и ученых, проживающих в Израиле, на решение президента США.

В Заключении обобщаются основные выводы диссертации.

Abu Zayed Ali Musa

PALESTINIAN INTERNAL DISCUSSIONS AND CONFLICTS IN THE CONTEXT OF ISRAELI-PALESTIAN DISCOURSE

The defense of the dissertation will take on June 30, at the meeting of Specialized Council 006 acting at the Institute of Oriental Studies of NAS RA.
Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4.
The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the
Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02.

SUMMARY

The main purpose of this dissertation is to research the position of the Arabs living in Israel on the Palestinian split, the prospects for its resolution, as well as the Palestinian political process and peaceful settlement. The study of this topic has scientific, as well as practical significance. There has been many researches done on the Palestinian issue, but this work differs from other studies as it presents an inner point of view, i.e. the view of Palestinian politicians and public figures on the Palestinian question, its past and future, as well as the processes in Palestine.

The dissertation consists of an introduction, four chapters, conclusion and bibliography.

The introduction shows the urgency of the topic, the objectives and goals of the dissertation, its scientific novelty, as well as a review of bibliography.

The first chapter, entitled *"The creation and development of the Palestine Liberation Organization (PLO) and the Palestinian National Liberation Movement ("Fatah"): an inside view"*, presents the historical background of the emergence of the Palestinian question. It presents the reasons of creation of the PLO, the development of events prior to its creation and the position of Arab movements and parties of that period in relation to it, as well as the position of the PLO on the Palestinian political system and decision-making mechanisms.

The second chapter is entitled *Hamas Movement: the creation and ideology, the conflict between Hamas and Fatah*. In this chapter are studied the creation of the "Islamic Resistance Movement" - Hamas, its position on

the PLO, the Oslo agreement, the peace process and political changes in the Palestinian enviroment. It studies the oppositional ideology of Hamas, the history of its emergence and development, as well as the position of Hamas on the idea of negotiations with Israel in general. This chapter also presents the conflict between the Hamas and Fatah movements, its grounds and consequences, as well as possible ways of developing relations.

The third chapter is entitled "*The Palestinian Public and Political Opinion on the Palestinian Question and the Future of the Palestinian State"*. It looks into the political and ideological dialogue in Palestine as whole, the features of the conflict between Hamas and Fatah, the reasons and roots of political differences between two movements and other groups. Through our interviews, we present the views of Arab politicians, public figures and academics, living in Israel, on the bases of the Palestinian split, their position on peace agreements and their role and vision of the solution and the independence of the Palestinian national decision.

The fourth chapter is entitled "*The problem of Jerusalem and international, Arab and intra-Palestinian discourse on it*". This chapter analyzes the decision of the 45th US President Donald Trump to declare Jerusalem the capital of Israel and move the US Embassy there, as well as the Israeli, Arab-Islamic and international reactions to it. This chapter also presents the views of the group of Arab politicians, public figures and academics, living in Israel, on the decision of the ex-President of the United States.

The Conclusion summarizes the main outcomes of the dissertation.